# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«ՆՈՐ-ՎԱԳ» ՍՊԸ**

**Գեղարքունիքի մարզի Լճաշենի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

**30.06. 2025թ.** **Լճաշեն բնակավայր**

**Հանրային լսմանը մասնակցում էին.**

- Հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Սուսաննա Անտոնյանը,
- Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Վահան Մարգարյանը,
- «ՆՈՐ-ՎԱԳ» ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Նավասարդյանը,
- Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակիցներ
- Հաշվետվության կազման և նախագծման մանագետներ Մանվել Հարությունյանը և Գևորգ Հովսեփյանը
- Լճաշեն բնակավայրի բնակիչներ և այլ մասնակիցներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի №2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով, 2025թ. հունիսի 30-ին, ժամը 12:00-ին, Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացավ «ՆՈՐ-ՎԱԳ » ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Լճաշենի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Սուսաննա Անտոնյանը, ով հանդես եկավ բացման խոսքով՝ ներկայացնելով փորձաքննական գործընթացն ու կատարված աշխատանքները:

Սուսաննա Անտոնյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության նպատակը, շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները, ինչպես նաև ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված ազդեցությունների մեղմման միջոցառումները, մասնավորապես՝ մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների և այլնի վերաբերյալ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և այլ գերատեսչություններին՝ կարծիքներ

ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակումների ընթացքում, և հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին՝ լրամշակված տարբերակով:

Սուսաննա Անտոնյանը ներկայացրեց, որ տարածքը գտնվում է Լճաշեն գյուղի վարչական տարածքում: Համաձայն ներկայացված կոորդինատների և քարտեզագրական տեղեկատվության՝ ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմամբ հաստատված «Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ) երկրաբանական հուշարձանի և հայցվող տարածքի հետ կան համընկնումներ:

Գևորգ Հովսեփյանը նշեց, որ իրենք ևս մեկ անգամ դիմել են կադաստրի կոմիտե և համաձայն ստացված տվյալների սեփականության վկայականով իրեն տրամադրված հողամասում պատմամշակությանի հողատարածքները չկան:

Բնակիչները և վարչական ղեկավարը հավելեցին, որ «ՆՈՐ-ՎԱԳ» ՍՊԸ-ի ներկայացուցիչերը իրեց համագյուղացիներն են և հաճախ են օգնում բնակավայրի և իրենց համար շատ կարևոր է, որ հանքի շահագործմանը տրվի թույլտվություն, քանի որ իրենց բնակիչներից են աշխատելու հանքում և շահագործումը դրական ազդեցություն կունենա բնակավայրի վրա:

Մասնակիցների կողմից քննարկվեցին արդյունքերությանը վերբերող տարբեր հարցեր, ոևոնք վերաբերում էինք սանիտարապաշտպանիչ գոտիներին, առաջացող ազդեցություններին և սպասվող արդյունքներին: Հաշվետվության կազման և նախագծման մանագետներ Մանվել Հարությունյանը և Գևորգ Հովսեփյանը պատասխանում էին բարձրացվող հարցերին:

Հակոբ Հարությունյան՝ ով Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչն է, բարձրացրեց գլխավոր հատակագծի և սեփականության վկայականով առկա հողի նպատակային նշանակությունների միջև առկա անհամապատասխանությունը: «ՆՈՐ-ՎԱԳ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ նշեց որ իրենց տրամադրված վկայականում նման բան նշված չի եղել և իրենք տեղեկություն չեն ունեցել այդ անհամապատասխանությունների մասին: Սուսաննա Անտոնյանը նշեց, որ այդ հարցի կարգավորման վերաբերյալ կարեղ է պահանջ դնել եզրակացության մեջ և ընկերությունը հետագայում կարող է դիմել համայնքին:Այդ տարբերակց ընկերությունը ժամկետների խնդրի չի ունենա և հարցն էլ կկարգավորվի ընկերության դիմումի համաձայն:

Սուսաննա Անտոնյանը նշեց, որ ՇՄՆ նախարարության համար նույնպես կարևոր է համայնքների զարգացումը և ներդրումները, սակայն, միևնույն ժամանակ, բարձրացված հարցերը պահանջում են իրավական հստակեցում և պետք է առաջնորդվել օրենքներով՝ հնարավորինս քիչ վնաս պատճառելով բնությանը և ապահովելով պատմաերկրաբանական հուշարձանների պաշտպանությունը:

Վարչական ղեկավարը ևս ընդգծեց, որ իրենց համար կարևոր է հանքի շահագործումը, քանի որ այն կնպաստի բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Հանրային լսման ընթացքում այլ հարցեր չեն հնչել: Լսումը լուսանկարվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Սուսաննա Անտոնյան

Նախաձեռնող «ՆՈՐ-ՎԱԳ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝